

---

## ԲՆԻԿ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՍԱԾՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԻԳԱԿԱԿԱՆ ԱԾՈՒՆՆԵՐԸ XII - XVI ԴՊ.

### ԱԼՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հատկանվանագիտությունը (օհոմաստիկա) հատուկ անուններն ուսումնասիրող լեզվաբանական առանձին բնագավառ է՝ իր երկու գիտաճյուղերով՝ տեղանվանագիտություն և անձնանվանագիտություն<sup>1</sup>:

Անձնանվանագիտությունը նարդկանց անվանումներն ուսումնասիրող գիտություն է: Անձնանուն ասելով հասկանում ենք տվյալ հասարակության անդամների անունները, հայրանունները, ազգանուններն ու մականունները: Դրանց բոլոր տիպերը պատմական են: Ցուրաքանչյուր ազգունեցել է անձնանունների իր համակարգը, որի կաղապարատիպերը դարերի ընթացքում մշակվել, համարվել ու հարստացվել են նոր կառույցներով՝ պայմանավորված տնտեսական, քաղաքական, գիտական ու մշակութային գարգացմանը:

Անձնանունը վավերացվում է իրավաբանորեն և տրվում է յուրաքանչյուր անհատի, ամրագրվում նրան ամենօրյա գործածության ժամանակ: Պաշտոնական գրառումները և հատուկ անունների արտասանության պաշտոնական ոճի կիրառումը կարող են խոչընդոտ դառնալ, որ նրանք ազատ ենթարկվեն լեզվի զարգացման կանոններին, մասնավորապես նրա ուղղախոսական և հնչյունաբանական փոփոխություններին, ուղղագրական բարեփոխումներին: Այս պատճառով անունների գուտ լեզվաբանական ուսումնասիրությունը չի կարող դուրս չգալ լեզվական սահմաններից և անտեսել անունների արտալեզվական կապերը: Դրանցից առաջինը հասարակականն է, որն իր հերթին անխօնելիորեն կապված է տնտեսական, պատմական ու քաղաքական իրադարձությունների հետ:

Անձնանունները ենթակա են նաև այնպիսի արտալեզվական երևոյթների ազդեցության, ինչպիսին է անունների ընդօրինակման գործոնը<sup>2</sup>:

Գոյություն ունեն միահիմք անուններ, որոնք ծագումով հաճախ մականուններ են, բայց նրանց մեջ կան և հորինվածներ: Մեր օրերում անձնանունները մականուններից տարբերվում են նրանով, որ առաջիններում հիմքերի հասարակ անվան ինաստն այնքան բացահայտ չէ, որքան երկրորդներում: Մականուններն ամեն անգամ նորից են ստեղծվում, անձնանունները փոխանցվում են սերնդեսերունդ: Շատ հնդեվրոպական լեզուների անձնանուններ կազմվում են համասեռ հիմքերով, որը վկայում է ինչպես նրանց ընդհանուր ծագման, այնպես էլ այն մասին, որ գոյություն ունեն այդ լեզուներից յուրաքանչյուրին բնորոշ որոշակի ավանդույթներ<sup>3</sup>:

Հասարակ անուններից հատուկ անունների առաջացումն ունեցել է պատմական գարգացում: Եթե որևէ հասարակ անուն դառնում է անձնա-

<sup>1</sup> Տե՛ս Սուպերանսկայա Ա. Վ. Օբщая теория имени собственного. М., 1973, էջ 5:

<sup>2</sup> Տե՛ս Նիկոնов Վ. Ա., Սուպերանսկայա Ա. Վ. Անտրոպոնимика. М., 1970, էջ 7:

<sup>3</sup> Տե՛ս Սուպերանսկայա Ա. Վ. Структура имени собственного. М., 1969, էջ 25:

նուն, հետագա գործածություններում վերանում է անվան և համապատասխան հասկացության միջև եղած իմաստային կապը: Իրենց երեխային **Սրբուհի** կոչող ծնողները, բարի ցանկությունից բացի, որևէ տրամաբանական կապ մանկան հետագա բնավորության և այդ անվան միջև տեսնել չեն կարող, ուստի ապագա օրինորդի ամենաանհամեստ արարքից հետո էլ նրան անվանում են **Սրբուհի<sup>4</sup>**:

Հայտնի է, որ XII-XVI դդ. Կիլիկյան հայերենը դառնում է Կիլիկիայի հայկական պետության պաշտոնական լեզուն, որին գուգահեռ՝ իբրև գրական լեզու շարունակում է գործածվել նաև գրաբարը<sup>5</sup>. Լինելով գրաբարախան լեզու՝ միջին գրական հայերենն առանձնանում է թե՛ հնչյունական ու քերականական ինքնատիպ կառուցվածքով և թե՛ փոխառություններով լի բառապաշարով, որի կարևոր շերտերից են բնիկ և փոխառյալ իգական անունները: Բնիկ հայերեն արմատներով կազմված անունների բառակազմական տարատիպ դրսնորումները միջինհայերենյան լեզվական իրակությունների և նոր գաղափարախոսության արդյունք են: Փոխառյալ անունների մուտքը պայմանավորված էր տարբեր ազգերի քաղաքական գերիշխանությամբ և այդ ազգերի հետ երկարաժողովական շփման:

Հնագույն շրջանից ավանդված իգական անունների ընդամենը մեկ տասնյակի հասնող շարքը համալրվում է ծաղիկների, գեղեցիկ կենդանիների, բնության երևույթների անվանումներից ստեղծված նորահնար անուններով, որոնք սերում են՝ ա) կենդանանուններից՝ **Այծյամն, Դոխիկ, Եղմիկ, Լորիկ, Կաքավ, Սիրամարգ, բ** բուսանուններից՝ **Բամբկիկ, Թփիկ, Խնկիկ, Մասուր** (Երկսեռ), **Նարինջ, Նումուֆար**, գ) գունանուններից՝ **Թուխիկ, Խաժիկ, Սլվիկ, Խարտեաշ**, դ) մարդ, մարդկային հատկանիշ ցույց տվող բառերից՝ **Ավագ** (այս շրջանում՝ իգական, հետագայում՝ արական), **Դշխուհի, Խելոր, Խոնարի, Խիկար, Մերիկ, Նանիկ, Սիրումիկ**, ե) բնություն և բնության երևույթներ ցույց տվող բառերից՝ **Արկիկ, Լուսին, Ծովիկ, Ցողիկ, զ**) բանկարժեք քարեր նշանակող բառերից՝ **Գոհարիկ, Զմրուխտ, Մարգարիտ, Ուլիկ**:

Որոշ անուններ կազմում են հոմանշային ու հականշային շարքեր՝ **Թուխիկ - Սլվիկ, Խիկար - Խելոր, Դմազանդ - Խոնարի, Դշխուհի - Թագուհի** (հնագույն շրջանում Երկու, իսկ միջին շրջանում 25 հիշատակություն է ունեցել), **Դիմար - Խելոր, Մեծխաթուն - Փոքրխաթուն**:

Ըստ արտահայտած վերաբերնունքային իմաստի՝ նույն հիմքից կազմված ածանցական հոմանշային գույգ են կազմում **Ծովակ - Ծովիկ, Դամեղ - Դամավոր, Նազիկ - Նազուկ** անձնանունները միայն: Իսկ նույն հիմքից կազմված արմատական և ածանցական տարբեր ձևեր ունեն հետևյալ կազմությունները՝ **Ավագեր - Ավագուհի, Գոհար - Գոհարիկ, Եղմեր - Եղմիկ, Երանի - Երանիկ - Երանուհի, Թանգ - Թանգո - Թանգոց - Թանգիկ - Թանգեր, Ծամ - Ծամիկ, Դերիք - Դերիքեկ, Սամա - Սամե - Սամեր - Սամիկ - Սամոց - Մերիկ, Մին - Մենիկ - Մինիկ, Շարմաղ - Շարմիկ, Ուլիկ - Ուլինկ - Ուլյակ, Սեր - Սերով - Սիրիկ, Տիկին - Տիկնաց**:

<sup>4</sup> Տե՛ս Յ. Խ. Բարսեղյան, Հատուկ անուն, Եր., 1964, էջ 21:

<sup>5</sup> Տե՛ս Գ. Զահուլյան, Հայոց լեզվի գարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 44:

Այս և փոքրացուցիչ-փաղաքշական ածանցներով կազմված իգական անունները ժամանակի մարդկանց լեզվանտածողության, նրանց գեղագիտական ճաշակի նույրը դրսնորումների հիմնալի օրինակներ են:

Յուրաքանչյուր անուն ծնվում է իր խորքային պատճառահետևանքային կապերով: Յնագույն շրջանում որոշ ժողովուրդների մեջ եղել են բացասական իմաստով անուններ: Այս կերպ անվանակրին պաշտպանում էին չար ուժերից: Օրինակ՝ հնում ռուսների մեջ գործածվել են այնպիսի անուններ, ինչպիսիք են Գորե, Գրազնուխա, Մերտեմ և այլն: Սլովակների մեջ կար հատուկ բացասական իմաստով անունների մի խումբ՝ կազմված *ne-, nez-* նախածանցներով, որոնք պահպանվել են ժամանակակից ռուսական ազգանուններում՝ Նեմիլ, Նեխորօ, Նեվեր, Նելիոబ, Բեզուխ, Բեզրուկ, Բեզհօս և այլն: Նման անունները բնորոշ են հատկապես այն ընտանիքներին, որոնցում երեխաներ են նահացել կամ հիվանդացել, և չար ուժից, աչքից պաշտպանելու ձգտումն ավելի ուժեղ է եղել:

Իրենց զավակներին կորսատից կամ հիվանդությունից փրկելու, չար աչքից հեռու պահելու միտումը նկատելի է և հայերի մոտ՝ *Իգիշուկ, Դիմար*:

Ըստ կազմության՝ ուսումնասիրվող շրջանում վկայված իգական անունները բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա) պարզ, բ) պարզ ածանցավոր, գ) բարդ կամ երկիմք, դ) բարդ ածանցավոր: Մատենագրական աղբյուրներում ու հիշատակարաններում, վիմագիր արձանագրություններում ու տապանագրերում վկայված այս անունները կազմությամբ առավելապես բարդ և ածանցավոր են: Իրենց գործառական արժեքով սրանց գրեթե չեն զիջում պարզ կամ միահիմք անունները: Ավելի սակավ են բարդ ածանցավորները:

Պարզ կամ միահիմք իգական անունները կազմված են՝

ա) գոյականներից՝ *Այժյամն, Գիմերուկ, Զմրուխտ, Զուզա* (հյ. արծաթե դրամի անուն, որ գործածվում էր ժարում), *Լուսին, Խոց, Խնձոր, Ծամ, Նարինջ, Նունուֆար, Ծամամ, Ծար* (կամ ընկույզի միջուկի, մրգի շարամ), *Ծաքար* (երկսեռ., 22 հիշ., 13-ը՝ իգ.), *Ուկի* (երկսեռ), *Սեր, Սիրամարգ* և այլն:

բ) ածականներից՝ *Ազնիկ, Դալար, Թանգ, Խարտյաշ, Խելոք, Խիզան, Խիկար, Խոնարի, Կլոր, Դավասար, Դնազանդ, Նախշում, Ծարմաղ* և այլն:

գ) թվականից՝ *Մին,*

դ) մակրայից՝ *Դերիք*:

Պարզ ածանցավոր կազմություններում նկատելի է անձնական վերաբերմունքի վերջածանցներով կազմված իգականների առատ գործածությունը: Հատկապես ընդլայնվում է *-իկ* փոքրացուցիչ-փաղաքշական ածանցի գործածությունը: Ընդ որում, այդ կազմություններում մեծ տեղ է գրավում գոյականական հիմքով բաղադրությունների շերտը: Դրանք են՝ *Աստղիկ, Արևիկ, Արքայիկ* (այս անունը հիմն շրջանում արական սերի անուն է եղել), *Բամբկիկ, Գոհարիկ, Դոխիկ, Եղմիկ, Թփիկ, Լորիկ, Լուսիկ, Խմիկիկ, Ծամիկ, Ծովակ, Ծովիկ, Դամիկ, Սամիկ, Սերիկ, Նազիկ < Նազենիկ, Նազուկ, Նամիկ, Նուշիկ, Ծաղիկ < Ծաղոսիկ, Ոստիկ, Ուկյակ* (երկսեռ) / *Ուկիկ / Ուկեկ < Ուկեհատ-ից, Ցողիկ:*

Փաղաքշանքի նշանակություն ունեն նաև ածական, թվական, եղանակավորող բառ խոսքի մասերից կազմված նկարագրական բնույթի ա-

նունները՝ **Երանիկ / Երմիկ** «երջանիկ», **Թուխիկ, Խաժիկ, Սեմիկ, Մինիկ, Սունթիկ, Շարմիկ < Շարմաղ, Սևիկ, Միվլիկ** (ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ -իկ կրկնակի փաղաքշական ածանցով կազմված), **Միրունիկ:**

Բայահիմքերից կազմված անուններ են՝ **Ուզիկ** «ուզելու, սիրված», **Միրիկ:**

Ուսումնասիրվող շրջանում սակավադեպ կիրառություն ունեն **-ե, -եկ, -ուշ, -ու** անձնական վերաբերմունքի ածանցներով բաղադրված կազմությունները՝ **Մամե, Ներիքեկ, Ուսեկ, Մեղուշ = մեղր+ուշ, Թանգու:** Նետագայում, մանավանդ խոսքային մակարդակում, սկսում են տարածվել գրեթե ցանկացած անվան կրճատմամբ և **-ու** մասնիկի հավելումով կազմված կոչական-մտերմական երանգ արտահայտող ձևերը:

Հանդիպում են նաև բառահարաբերական երկրորդական ձևույթներով կազմված անուններ, որոնց կազմում այդ ձևույթները բառակազմական արժեք են ծերք բերել: Օրինակ՝ **-եր** հոգնակերտը, դրվելով անվան վրա, ամենահին էլ տվյալ անձի մեկից ավելի լինելը չի նշանակում՝ **Ազգեր, Ակներ** (նաև տեղանուն կա), **Ավագեր, Եղմեր, Թանգեր, Մամեր:**

Ածանցի արժեք ունեն նաև սեռականի կամ գործիականի **-անց, -աց, -ոց, -ով**, բայական **-այ, -եալ** վերջավորությունները՝ **Ականց, Աղրաց, Բամկոց, Գինոց, Թանգոց, Կանանց, Դայոց** (Երկսեր, 6-ից 1-ը՝ ար.), **Մամոց, Ուկանց, Տիրանց, Տիկնաց, Մերուց** «սիրով», **Գտայ** «գտել են», **Կատարյալ** (արաբ. **Թամամ** անվան բարգմանությունը. «Էր անուն նորա թամամ, որ է կատարեալ կամ լցեալ», ԺՊ դ.), **Մայրացյալ:**

Ավելի փոքր հաճախականություն ունեն նախածանցավոր և վերջածանցավոր հասարակ անունների փոխանցումով առաջացած իգական անուններ՝ **Անթառամ, Աննման, Ջամասիյութ, Բախտավոր, Ջամավոր, Ջարկեվոր** (հարգի + ավոր՝ «հարգելին»), **Ծնորհավոր** (Երկսեր), **Պատվական** (Երկսեր), **Զարդար / Զարդարիկ, Ջամեղ, Նազուտ:** Որոշ անուններ դուրս են մղվել հասարակ անունների հետ համահունչ լինելու պատճառով:

Հայերենում գոյականը սեռի քերականական կարգ չունի: Անձ ցույց տվող որոշ հասարակ անուններ, սակայն, **-ուիի** պահլավական ծագման ածանցով դրսենորում են արական և իգական սեռն արտահայտող երկու հակառիդ ձև՝ բժիշկ-բժշկուիի, ուսանող-ուսանողուիի և այլն: Քերականական այս իրողությունը գրեթե նույն համաշափությանք նկատելի է նաև իգական անուններում: Կարելի է ասել, որ երկու դեպքում էլ արմատի և այս ածանցի զուգակցումը կատարվում է ընտրողաբար: XII-XVI դդ. **-ուիի** ածանցով հիշատակված ընդամենը 5 անուն կա՝ **Դշխուիի, Երանուիի, Զարմանուիի, Պսակուիի, Մորուիի:**

Այս շրջանում պասիվ գործածություն ունի **-անուշ** իգականակերտ բաղադրիչը՝ **Միրանուշ / Միրուշ: -Ուշ** հնչույթախմբի կրճատումով առաջացած ձև է **Միրամ** անունը:

XII-XVI դդ. նշանակալից թիվ են կազմում բառաբարդման ճանապարհով առաջացած իգական անունները: Գ. Զահուկյանը գրում է. «Բարդությունները կարևոր դեր են խաղացել հնդեվրոպական հատուկ անունների կազմավորման մեջ: Յին հնդկական, հունական անձնանունները հաճախակի են կազմվում բարդության եղանակով: Վաղնջահայերենը նույնպես պետք է ունենար բարդ անձնանուններ, որոնք, սակայն, չեն պահ-

պանվել: Դրանց բնույթի մասին միայն որոշ գաղափար են տալիս Անանոր, Վանատուր (առաջին բաղադրիչը ոչ բնիկ) դիցանունները, Նորայր, Տիրայր, Սկայորդի, Յաջայա անձնանունները»<sup>6</sup>:

Բարդ կամ երկրադադրիչ անունների երկու տիպ կա՝ ա) հիբրիդային, որի մի եզրը բնիկ հայերեն արմատ է, մյուսը՝ փոխառյալ կամ անհայտ ծագման որևէ բառ, բ) զուտ հայկական, որոնց երկու բաղադրիչներն ել բնիկ են: Թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբի կազմություններն առավելապես անհոդակապ որոշիչ-որոշյալ կապակցության կառուցյներ են: Ըստ ակադ. Գ. Զահուկյանի՝ հնդեվրոպական լեզուն բարդության բաղադրիչների կապակցման հատուկ միջոց և, մասնավորապես, հոդակապ չի ունեցել: Դին հայերենում էլ առկա -ա - հոդակապը տարածվել է միայն հնագույն շրջանում՝ այն էլ համեմատաբար ուշ՝ վերջավորությունների թուլացումից և անկումից հետո՝<sup>7</sup>:

Հոդակապավոր անունների կազմում հատուկ խումբ են կազմում -ա - հոդակապից առաջ իշե՞ հնյունափոխությամբ երկիխմբ՝ **Բարետիկին, Գինեվարդ, Ուկեսիկին**, այնուհետև սրանց նմանողությամբ բաղադրված **Բարձրեխաթուն, Վարդեթուի, Վարդեծոց, Վարդեհատ, Վարդեմայր** իգականները, որոնց կազմում -ե՞ -ն հոդակապի դեր ունի:

Առաջին խմբի կամ հիբրիդային անունների ակտիվ կազմիչներ են այլ լեզուներից փոխառված պրոպ. գուլ «վարդ», շահ «քագավոր», թոք. իսարուն «տիկին», արաբա-հրեական մելեք «հրեշտակ», մելիք «քագավոր» և այլն բառերը: Ստորև ներկայացնում ենք այդ խմբերը՝ ըստ խոսքիմասային պատկանելության:

ա) գոյական+գոյական՝ **Զարդիսաթուն, Խերիսաթուն, Խերմելեք** (բրբո. խեր «հայր») **Լույսիսաթուն, Ջայխսաթուն, Մամախսաթուն, Մարխսաթուն** (ըստ Յր. Աճայանի՝ Յիմար-խաթուն ձևից), **Քույրիսաթուն, Գոհարշահ, Գոհարիսաթուն, Գուլուսկի, Գուլվարդ, Ղշխոմելիք, Ծովինար** = ծով+արաբ. նար «հուր, կրակ», **Ջայրմելիք, Ջատմելիք, Մամսիք, Մամուկսիք** = հյ. մամուկ «տատիկ»+արաբ. siti «տիկին», **Շահտիկին, Շողմելիք, Գոհարմելեք, Մելեքտիկին** և այլն:

բ) ածական+գոյական՝ **Ավագիսաթուն, Բարիխսաթուն, Թանգիսաթուն, Մեծխսաթուն, Փոքրիսաթուն, Նորիսաթուն, Թանգմելիք** և այլն:

Երկրորդ խումբն իր հաճախականությամբ գերազանցում է նախորդին: Սրանք կազմվում են հետևյալ կաղապարներով՝

ա) գոյական+գոյական՝ **Ազգատիկին, Արևտիկին, Գոհարտիկին, Երեստիկին, Յոռոմտիկին, Սամատիկին, Ծնորհտիկին, Սիրատիկին, Վարդտիկին, Թագոսկի, Ծամոսկի, Շաղոսկի, Ուկեթօվի, Ուկեթամ, Ուկեթան, Ուկեթատ, Ուկեթեր** (Երկսեռ, 4 հիշատակությունից 3-ը արական), **Տիրամայր, Վարդիթեր, Գոհարշատ, Խոցադեղ, Սարեմթագ, Նուշուշար, Սիրիքախտ, Սիրուխտ** և այլն:

բ) ածական+գոյական՝ **Աղեկտիկին, Աղեկմանուկ, Ավագտիկին, Բարետիկին, Թանգտիկին, Թուխծամ, Մեծտիկին, Նորտիկին, Ծենտիկին, Թամամամա, Թամգմայր, Թուխծամ** և այլն:

գ) թվական+գոյական՝ **Մենտիկին**,

<sup>6</sup> Գ. Բ. Զահուկյան, Յայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 250:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 246:

- դ) դերանուն+գոյական՝ **Ամենտիկին, Զ + ամենտիկին**,  
 Ե) հասուկ անուն+բայահինք՝ **Մարեմտուր** (**Աստվածատուրի** համարանությամբ կազմված),  
 զ) մակրայ+գոյական՝ **Դերիքմամ:**

Բարդ ածանցավոր մի քանի անուններն ել, ըստ բաղադրիչների գուգորդելիության հաջորդականության, սերող պարզ հիմքով և -իկ-ով կազմված բաղադրող հիմքով կազմություններ են՝ **Շարմիլելիկ = Շար + /միլելիկ/, Իգիշուկ = Իգ/էգ/ + /իշուկ/, Մայրոտատիկ = Մայր + /տատիկ/**:

Ունենալով գնահատողական բնութագիր՝ պատմական այս շրջանից եկող երկիխմբ իգական անունները բնութագրվում են նաև իրենց բաղադրիչների դիրքային գուգորդումներով: Այսպես, **Վարդ, մայր, ուկի, աղեկ** բաղադրիչները կիրառական են բարդության թե՛ սկզբնադիր, թե՛ վերջնադիր մասերում, օրինակ՝ **Գիմեկարդ, Գոհարվարդ = Վարդեծոց, Վարդեհատ, Մայրանուն, Մամատատ = Թամզմայր, Վարդեմայր, Թագոսկի, Շաղոսկի = Ուկեթուփ, Ուկեծամ, Ծամոսկի = Ուկեծամ, Աղեկմանուկ = Բախտադեկ** և այլն:

Ընդհանրացնելով XII-XVI դդ. հայկական իգական անունների բառակազմական-իմաստաբանական յուրահատկությունները՝ հանգում ենք հետևյալին.

1. Պատմական տարբեր ժամանակներում հայերն ունեցել են տվյալ ժամանակաշրջանին բնորոշ անձնանունների տարբեր շերտեր: Այսպես, V-XII դդ. գործածված թե՛ արական և թե՛ իգական անուններն իրենց իմաստային և բառակազմական տիպերով արմատապես տարբերվել են միջին շրջանի և ժամանակակից անուններից: Նախորդ փուլի համեմատությանք XII-XVI դդ. բնիկ հայերեն արմատներով կազմված իգական անուններն ավելի մեծարիկ են: Դրանք անձնանունների համակարգում նոր որակ են ստեղծել՝ պայմանավորված և լեզվական, և արտավեճվական գործոններով: Անվանադրման գործընթացում արդեն ընդգծվել է նաև կնոջ հասարակական դերը:

2. Անուններ են սկսում կազմվել ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ -իկ, -եկ, -ուշ, -ո քերականական ձևերից առաջացած -եր, -անց, -աց, -ոց ածանցներով, մասամբ նաև բայական և դերբայական -այ, -եալ վերջավորություններով: Ուսումնասիրվող շրջանում անվանադրման նոր և գործուն եղանակ է դիտվում երկրադրիչ կաղապարատիպը:

Ըստ արտադրողականության՝ ակտիվ գործածություն ունի -իկ ածանցը, որով բաղադրված անունների կիրառությունը վերաբերնունքային է: Յայ անվանադրին շատ հարազատ է լեզվական այս միջոցը: Դրանով կազմված հասարակ անունների հնագույն օրինակները գալիս են վիպասանական հայերենից՝ «խարտեաշ պատանեկիկ...», «զկարմրիկն եղեգնիկ»:

Երկիխմբ անուններում ամենագործունը գոյական+գոյական, իսկ ածանցավորների մեջ՝ գոյական+իկ կաղապարներն են:

Ըստ սերող հիմքի խոսքիմասային պատկանելության՝ գործառական գերակշռություն ունի գոյականը, այնուհետև՝ ածականը: Եզակի գործածություն ունեն մակրայն ու թվականը:

3. Անձնանունները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ արական և իգական: Յայերենում արական և իգական անուններն իրարից

տարբերակող հատուկ ձևաբանական ցուցիչներ չկան, ինչպես ռուսենում է՝ Alexandre - Александра, Евгений - Евгения, Олег - Ольга: Բացի **-ուիկն**, **-ուիի** ձևույթներով կազմվածներից, մյուսներն արական անուններից կարող են տարբերվել բովանդակությամբ: Սակայն հիմնականում ոչ բովանդակությամբ, ոչ էլ քերականորեն իրարից չեն տարբերվում: Շատ կան, այսպես կոչված, երկսեռ անուններ:

Հանդիպում են անուններ էլ, որոնք նախորդ շրջանում եղել են արական, այս և հետագա շրջաններում վերածվել են իգականների կամ հակառակը: **Ծովակ-ը**, օրինակ, ուսումնասիրվող փուլում որպես իգական է վկայված, նորօրյա ըմբռնմամբ այն արական է: **Արքայիկ-ը** և **Ծաղիկ-ը** հնում արական, միջին շրջանում որպես իգական անուն են հիշատակվել: Իսկ հնագույն շրջանում **Լուսիկ** անունը, որ միայն արական անուն էր, միջին շրջանում արդեն երկսեռ է (7-ից 5-ը արական, 2-ը իգական են): Այս անունը կապվում է լուսի պաշտամունքի հետ, որի հետքերը, ինչպես և ջրինը, նկատելի են կրոնական ծիսակատարություններում: Դիշենք ճրագալույցի օրը և Զրորինեքը: Ուստի անունն էլ պետք է առաջացած լինի հնադարում, երբ տոտեմական հավատքից անցում է կատարվում դեպի բնապաշտություն, և պաշտամունքի առարկա են դառնում արևը, լուսինը, ջուռը, կրակը և ոգիները:

**Հաքար, Պատվական, Ուկի** երկսեռ անուններից առաջին երկուսն այսօր արական են դարձել, վերջինը՝ իգական: Որպես իգական հիշատակված **Խիլկար** անունը ևս արդի ժամանակներում արական է:

4. Միջնիայերենյան նորամուտ ու նորահնար իգական անձնանվանահիմքերը, ըստ իմաստային թեմատիկ բաշխնան, բազմաշերտ են: Հատկապես գերակշռում են կենդանանուններ, բուսանուններ նշանակողները:

Դուրս են մղվել առավելապես կազմությամբ բարդ, այլև ածականակերտ ածանցներով կազմվածները, և ընդհակառակը, պահպանվել են ծաղիկների, գեղեցիկ կենդանիների, բանկարժեք քարերի և բնություն, բնության երևույթ նշանակող անվանումներից առաջացածները՝ **Կաքավ, Սիրամարգ, Մարգարիտ, Ուկի, Արկիկ, Ծովինար, Ծովիկ, Ցողիկ** և այլն: Երկրադարձներից պահպանվել են **Վարդիթեր, Ուկեհատ** անունները:

5. Ակնհայտ է, որ բնականոն ճանապարհով առաջացած անունները անվանաստեղծ հստակ ձևույթներով են կազմված: Ոչ հստակ, այսինքն՝ անհամապատասխան ձևույթներով կազմված անունները սովորաբար հապճեպ մտածված են: Երեմն անտեսվում է այն հանգամանքը, թե տվյալ արմատը՝ որպես անձնանվանահիմք, արդյոք պահանջում է դիցուք **-ար**, **Զարդ+ար**, **-ուիկ**, **Զարման/ալ/+ուիկ** կամ **-ուտ**, **Նազուտ**, ածանցը, թե ոչ: Ի դեպ, **-ուտ-ը** տեղանվանակերտ է՝ **Թեղուտ**:

6. Կան փոխառյալ անունների համարանությամբ կամ էլ՝ պատճենմամբ առաջացածներ, օրինակ՝ **Թանգեր, Եղմեր = Գուլանիաշա** (ժԵ) (ավելի ուշ՝ **Գուլան** (1602)` գուլ «վարդ» + ան «եր» հոգն. մասնիկ), **Ցայխարուն = Թաթարիսաթուն** (թաթար ազգի անունից), **Կատարյալ** = արաբ. **Թամամ**, **Վարդում** = պրսկ. **Գուլում, Ծովխաթուն** = **Բահրիխաթուն** (արաբ. բահր «ծով»), **Վարդտիկին** = **Գուլխաթուն**, **Ցոռոմխաթուն** = **Ցոռոմտիկին**:

7. Վերոհիշյալ անուններից շատերը նոր ազգանունների ծնունդ են տվել՝ **Սիրամարգ-Սիրամարգյան** (XII դ.), **Ցողիկ-Ցողիկյան**, **Ծնորհավոր-**

**Ծնորհավորյան, Թամգեր-Թամգերյան, Թամգ-Թամգյան, Զմրուխտ-Զմրուխտյան, Խելոք-Խելոքյան (XIII դ.), Ծովիկ-Ծովիկյան, Նուշիկ-Նուշիկյան (XIV դ.), Թուխիկ-Թուխիկյան, Շաղիկ-Շաղիկյան (XV դ.), Սևիկ-Սևիկյան (XVI դ.), Դոխիկյան<sup>8</sup>:**

8. Անունները լինում են հաճախադեպ և հազվադեպ: Անունների հաճախադիպությունը պայմանավորում է ժամանակը: Այսօրվա լեզվամտածողությամբ անսովոր, սակայն անցյալում հաճախված է եղել **Ծնորհավոր** երկսեռ անունը, որի 75 հիշատակությունից շուրջ 58-ը հգական է: Ընդհակառակը, հազվադեպ կամ մեկ-երկու հիշատակություն ունեցողները (**Կաքավ, Դասմիկ, Նունուֆար** և այլն) կարող են հետագայում կենսունակ ու գործուն դառնալ: Փոխվում են ժամանակները, փոխվում են նարդկանց ընթացումները: Յնաբույր, երկարաշունչ համարված անուններն աստիճանաբար դուրս են մղվում գործածությունից: Կենսունակ են դառնում ձևով ու բովանդակությամբ գունեղ, քաղցրահունչ անունները:

9. Ինչպես հասարակ անունները, անձնանունները ևս կազմված են բառակազմական նույն տարրերից, սակայն, ի տարրերություն հասարակ անունների, անձնանուններն ունեն բառակազմական սահմանափակ հնարավորություններ, որն էլ բացատրվում է նրանց անվանողական դերով: Բառակազմական մասնիկներից բոլորը չեն, որ կիրառելի կամ անվանաստեղծ են: Գրեթե յուրաքանչյուր անձնանվանահիմք ունի իր, այսպես ասած, նախընտրելի բառակազմական ձևույթը, որն էլ անձնանունների յուրօրինակ կաղապարատիպերի ծնունդ է տալիս:

**АЛВАРД ХАЧАТРИЯН – Армянские женские антропонимы, образованные из исконно армянских основ (XII–XVI вв.).** – В XII–XVI веках число женских антропонимов в армянском языке приближается к трёмстам. Они представляют собой главным образом дериватные конструкции, образованные из зоонимов и имён растений. В этот период были, в частности, распространены сложные антропонимы, образованные из основ “хатун” или “тикин”.

**ALVARD KHACHATRYAN – Native Armenian roots in female names of XII-XVI centuries.** - The number of Armenian female names of XII-XVI centuries, which are formed from Armenian roots, is nearly 300. These proper names have simple-derivative formation and are derived from the names of plants and animals. Among the popular compound proper names of these centuries, there are also names with particles “khatun” or “tikin.”

<sup>8</sup>Տե՛ս S. Ավետիսյան, Հայկական ազգանուն, Եր., 1987, էջ 137-138: